ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/04

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Գասպարյանի

Մասնակցությամբ՝

Բողոքաբերի ներկայացուցիչ՝ Գոռ Գրիգորյան

Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Գրիգոր Հարությունյան, Էդվարդ Շաքարյան, Գագիկ Հուրոյան

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

«ՆՈՒՌ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) 09.04.2019թ. ներկայացրել է բողոք, որին տրվել է ԳԲՔԱ-ԱՄ-2019/44 ծածկագիրը: Բողոքը Բողոքներ քննող անձ Մ. Անանյանի կողմից ընդունվել է վարույթ: 17.04.2019թ. բողոքին տրվել է նոր՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/04 ծածկագիրը, բողոքը Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից ընդունվել է վարույթ, գործի քննությունը սկսվել է սկզբից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ քննելով «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի կողմից 09.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

2. «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Բողոքաբերը բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի համառոտ նկարագիրը և փաստերը.

Գնահատող հանձնաժողովի թիվ 26.02.2019թ. որոշմամբ հաստատվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեքստը:

Հրավերում առկա տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն կազմված է խտրական և թերություններով:

Բողոքաբերը՝ 04.04.2019թ.-ին հրավերի պարզաբանման նպատակով, օրենքով սահմանված կարգով, հարցում է կատարել գնահատող հանձնաժողովին, սակայն առ այսօր որևէ պատասխան չի ստացել:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Տվյալ պարագայում պատվիրատուն միևնույն բնութագիր ունեցող աշխատանքները բաժանել է 8 չափաբաժինների, այն դեպքում, երբ դա կարելի էր հայտարարել և իրականացնել մեկ չափաբաժնով:

Մեկ չափաբաժնով մրցույթը իրականացնելու դեպքում անհամեմատ կկրճատվեն նաև պահանջվող տեխնիկական միջոցները և աշխատանքային ռեսուրսները:

Օրինակ, 32 ավտոինքնաթափի փոխարեն կարելի է ամբողջ աշխատանքներն իրականացնել 15-20 ավտոինքնաթափով, և 4 ճարտարագետ-շինարարի և ճանապարհաշինարարի միջոցով: Նման պայմաններում մասնակցի կողմից ներկայացվող գնառաջարկները բավականին կնվազեն, ինչի արդյունքում հնարավոր կլինի իրականացվելիք աշխատաններն իրականացնել բավականին մատչելի գնով:

Անորոշ է նաև պահանջվող տեխնիկական միջոցների 9-րդ չափաբաժնի համար պահանջված ճաքալցման ագրեգատի նկարագրությունը: Հրավերի տեքստի համաձայն պահանջվում է ճաքալցման ագրեգատ Եվրոպական արտադրության կամ համարժեք: Որևէ նշում ագրեգատի տեխնիկական տվյալների մասին առկա չէ, հետևաբար, անհնար է որոշել դրա համարժեքությունը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Ինչպես արդեն նշել եմ, բողոքաբերի կողմից պարզաբանում ստանալու նպատակով հարցում է ներկայացվել գնահատող հանձնաժողովին, սակայն որևէ պատասխան չի ստացվել: Հանձնաժողովի կողմից խախտվել է բողոքաբերի օրենքով սահմանված պարզաբանում ստանալու իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ և ղեկավարվելով Օրենքի 46-48-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով, խնդրում եմ բողոքը բավարարել, այն է՝

1. Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել գնման առարկայի փոփոխության մասին որոշում և 1-8 չափաբաժինները հայտարարել մեկ չափաբաժնով:

2. Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի 9-րդ չափաբաժնի համար նախատեսված ճաքալցման ագրեգատի նկարագրությունը փոփոխելու մասին որոշում:

3. Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին տրամադրել պարզաբանում բողոքաբերի կողմից 04.04.2019թ.-ին կատարված հարցման վերաբերյալ:»:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի կողմից 09.04.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է գրավոր դիրքորոշում, հետևյալի մասին.

«Ի պատասխան 10.04.2019թ. կայացած ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման, ճաքալցման և հողային պաստառով գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների գնման մրցույթի վերաբերյալ «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի կողմից բարձրացված հարցադրումների հայտնում եմ, որ փոխոցների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքների հայտը ներկայացվել է թվով 8 չափաբաժնով, քանի որ աշխատանքները նախատեսվում է կատարել միաժամանակ մայրաքաղաքի 12 վարչական շրջանում, յուրաքանչյուր վարչական շրջանում առնվազն 2 բրիգադներով, աշխատանքների ծավալների հիմնական մասը պետք է իրականացվի 2-3 եռամսյակներում և սեղմ ժամկետներում:

Աշխատանքային փորձը ցույց է տվել, որ հանրապետությունում որևէ շինարարական կազմակերպություն չունի պահանջվող քանակությամբ մասնագիտացված բրիգադներ, և նախատեսված աշխատանքները հնարավոր չէ իրականացնել մեկ կամ երկու կազմակերպությունների ուժերով:

Քանի որ բոլոր վարչական շրջաններում աշխատանքները սկսվելու են միաժամանակ, ուստի տեխնիկական միջոցների և ասֆալտի գործարանի առկայությունն անհրաժեշտ է յուրաքանչյուր չափաբաժնի համար:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի կողմից 09.04.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում

հատուցման դիմաց արժեք, այն է՝ ... գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի արդեն 2-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը ... չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 25-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող

են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

- 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման, ճաքալցման և հողային պաստառով գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Գնման առարկան խմբավորված է եղել «10» չափաբաժիններում:

Մրցույթի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 1-8 չափաբաժինների մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«Տեխնիկական բնութագիր.

Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ. (1--8 չափաբաժիններ).

1.Նախապատրաստական աշխատանքներ ֆրեզով, կոմպրեսորով և ասֆալտ կտրող սղոցով,

2.Դիտահորերի և անձրևաորսիչների նիշերի ուղղում՝ վերատեղադրմամբ, անհրաժեշտության դեպքում նորի տեղադրումով,

3.Ասֆալտապատման ենթակա մակերեսի մաքրում կեղտից, փոշուց և առաջացած ասֆալտբետոնյա կտորներից, մակերևութի մշակում բիտումային էմուլսիայով, անհրաժեշտության դեպքում խճե հիմքի ուղղում խճով կամ ֆրեզավորված ասֆալտբետոնով, ֆրեզավորված մակերեսում առկա ճաքերի ճաքալցում,

4.Վերոգրյալ աշխատանքների թաքնված աշխատանքների ակտը տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության և պատվիրատուի կողմից հաստատելուց հետո իրականացնել ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղադրում,

5.Շին աղբի բարձում և տեղափոխում,

6.Շին.աշխատանքների ժամանակ ճանապարհների վերանորոգվող հատվածների փակում և ժապավեններով առանձնացում, ինչպես նաև տրանսպորտային հոսքի կարգավորման իրականացում ճանապարհային նշանների տեղադրմամբ կամ վերատեղադրմամբ,

7.Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Երևանի քաղաքապետարանի կողմից տրվող պատվեր-առաջադրանքների հիման վրա:»:

Մրցույթի հրավերով գնման առարկայի 9-րդ չափաբաժնի մասով կնքվելիք պայմանագրի կատարման համար ի թիվս այլոց պահանջվել է հետևյալ տեխնիկական միջոցը՝ «Ճաքալցման ագրեգատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/»:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի՝ գնման առարկան առանձին չափաբաժինների բաժանելը ելել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթներից, չի հետապնդել մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակ, այլ հակառակը՝ միտված է եղել ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը:

Այլ կերպ ասած՝ Պատվիրատուի գործողություններում կարձանագրվեր հակաօրինական քայլ, եթե մեկ գնման առարկայի առանձին չափաբաժինների բաժանելը հետապնդեր մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակ, որն էլ, սույն գործի փաստերից, մասնավորապես՝ շինարարական աշխատանքների սեղմ ժամկետներում՝ 2-րդ և 3-րդ եռամսյակներում և միաժամանակ մայրաքաղաքի 12 վարչական շրջաններում իրականացնելու նախատեսված լինելու հանգամանքներից ելնելով, բացակայում է:

Հաշվի առնելով վերոնշյալները՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ յուրաքանչյուր վարչական շրջանում կատարվելիք աշխատանքների ծավալը կարող էր սահմանվել Հրավերով՝ որպես Մրցույթի առանձին չափաբաժին:

Անրադառնալով բողոք բերող «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ.Գրիգորյանի՝ ներկայացրած բողոքն առանց քննության թողնելու դիմումին, Բողոքներ քննող անձը հանգում է հետևյալ եզրակացության.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա):

2. Օրենսդրության մեջ կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմի բացակայության և օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքները կամ տվյալ իրավահարաբերության էությանը համապատասխան իրավունքի ընդհանուր սկզբունքները (իրավունքի անալոգիա):

3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը:

4. Օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով անալոգիայի կիրառման արգելք սահմանված չէ:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:

Իսկ արդեն նույն օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 22-րդ կետի համաձայն՝ Բողոք ներկայացրած անձի կողմից վարույթ ընդունված բողոքն առանց քննության թողնելու մասին ներկայացված գրավոր կամ բանավոր միջնորդության դեպքում, Անձը չի դադարեցնում բողոքի քննման և որոշման կայացման ընթացակարգը՝ այն համարելով որպես նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, միջնորդությունը ներկայացվելուն հաջորդող աշխատանքային օրը դրա մասին տեղեկագրում հրապարակելով հայտարարություն: Նույն կետի կիրառման դեպքում բողոքի քննության նոր ժամկետ չի սահմանվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի համաձայն՝ դատարանում գործը վարելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու ցանկացած դատավարական գործողություն, բացառությամբ՝ ... հայցապահանջներից ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվելու:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասում թվարկված գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար ներկայացվողի տված լիազորագրում պետք է ուղղակիորեն նախատեսված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝

Բողոք բերող «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ.Գրիգորյանը Բողոքներ քննող անձին խնդրել է 09.04.2019թ. «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը թողնել անհետևանք:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ պատվիրատուի հետ բանակցությունների արդյունքում Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պայմանների վերաբերյալ բողոքաբերը ստացել է բողոքում բարձրացված հարցերի և խնդիրների պատասխանները:

09.04.2019թ. բողոք բերող «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ.Գրիգորյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ.Անանյանին ներկայացրել է դիմում՝ բողոքից հրաժարվելու վերաբերյալ, որում մասնավորապես հայտնել է հետևյալը.

«09.04.2019թ. «ՆՈՒՌ» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Բողոքը մակագրվել է Ձեզ և դրան տրվել է ԳԲՔԱ-ԱՄ-2019/44 համարը:

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ պատվիրատուի հետ բանակցությունների արդյունքում բողոքաբերը ստացել է բողոքում բարձրացված հարցերի և խնդիրների պատասխանները: Նման պայմաններում բողոքի հետագա քննությունը դառնում է առարկայազուրկ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ խնդրում եմ 09.04.2019թ. «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը թողնել անհետևանք:»:

Բողոքի քննության նպատակով 29.04.2019թ. Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ բողոք բերող «ՆՈՒՌ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ.Գրիգորյանը պնդեց 09.04.2019թ. դիմումով ներկայացված դիրքորոշումն ամբողջությամբ:

Պատվիրատուի ներկայացուցիչները ևս պնդեցին Բողոքներ քննող անձին ուղղված՝ Բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշմամբ հայտնած կարծիքը:

«ՆՈՒՌ» ՍՊ ընկերության տնօրեն Հ. Կարապետյանի կողմից Գ. Գրիգորյանին 22.02.2019թ. տված լիազորագրում բացակայում է ներկայացրած բողոքը հետ վերցնելու, կամ առանց քննության թողնելու մասին դիմում ներկայացնելու իրավասությունը: Ավելին՝ լիազորագրի «դատական ներկայացուցչության» հատվածում ևս բացակայում է թե բողոքից և թե հայցադիմումից (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 2-րդ մաս) հրաժարվելու իրավասությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՆՈՒՌ» ՍՊ ընկերության լիազորված անձն օժտված չէ բողոքից հրաժարվելու (առանց քննության թողնելու (սույն դեպքում այս երկու ինստիտուտները նույնանում են իրենց նպատակով)) իրավասությամբ, ուստի նման պայմաններում, ելնելով բողոքը ներկայացրած Ընկերության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված իրավունքի իրականացման նպատակներից, Բողոքներ քննող անձը գտնում է, որ ներկայացված դիմումն ենթակա չէ քննարկման:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

«ՆՈՒՌ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 09.04.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ